ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/29

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի 01.08.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 01.08.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու) «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի թիվ 9 հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետով սահմանել է, որ ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով բաց մրցութային ընթացակարգին:

«Սուարդի» ԲԸ-ն ընկերության կողմից ներկայացված թիվ 9 հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնագրի 1.1 կետում նշել է, որ ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 57+000-կմ 64+174 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնին:

Գտնում ենք, որ «Սուարդի» ԲԸ-ի կողմից խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով և գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ թիվ 9 հավելվածով սահմանված՝ գնման ընթացակարգի օրինակելի ձևերով նախատեսված պարտադիր վավերապայմանները, քանի ՀՀ ֆինանսների նախարարի 667-Ա հրամանով, «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգի օրինակելի ձևով նախատեսվել է տուժանքի մասին համաձայնագրի՝ թիվ 9 հավելվածի օրինակելի ձև, որի 1.1 կետով սահմանված վավերապայմաններն են «գնման առարկայի անվանումը» և «գնման առարկայի ծածկագիրը», որոնք նախապես լրացվում են Պատվիրատուի կողմից: Սակայն մասնակիցը գնման առարկայի փոխարեն նշելով չափաբաժնի անվանում, թույլ է տվել օրինակելի ձևի խախտում, ինչի արդյունքում ստացվում է, որ այլևս գոյություն չունի տվյալ գնման առարկայի անվանումով և ծածկագրով գնման ընթացակարգ, ինչն էլ իր հերթին անհամապատասխանություն է և ենթակա է մերժման:

Իսկ տվյալ պարագայում Պատվիրատուն պետք է առաջնորդվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետով և ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով սահմանված՝ գնման ընթացակարգի օրինակելի ձևերով նախատեսված պարտադիր վավերապայմաններով և մերժեր ընկերության հայտը, քանի որ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ուստի հրավերի պահանջներին անհամապատասխան հայտերը պետք է մերժվի, քանի որ հայտի ապահովման (տուժանքի մասին համաձայնագրի հավելված թիվ 9) արձանագրված անհամապատասխանությունները ենթակա չէ շտկման»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել (չեղյալ հայտարարել) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված՝ Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 36+200կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.06.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «Սուարդի» ԲԸ-ի հայտը ընթացակարգի հրավերի պայմաններին համապատասխան գնահատելու մասին որոշումը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

Միջնորդում ենք՝ կասեցնել «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով գնումների ընթացակարգը, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման

իրականացումը, այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը, մինչև սույն բողոքի վերաբերյալ վերջնական որոշման իրականացումը, քանի որ պայմանագիր կնքելու արդյունքում բողոքը բավարարելու պարագայում արհեստականորեն կդժվարանա Խորհրդի որոշման կայացումը»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Էդվարդ Գրիգորյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.08.2017թ. թիվ 08/15.3/14703-17 գրությամբ «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ուսումնասիրելով բողոքի առարկան՝ տեղեկացնում եմ, որ գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատել է համաձայն հրավերի պահանջներին, մասնավորապես «Սուարդի» ԲԸ-ի տուժանքի մասին հայտարարությունը լրացված է ճիշտ, կազմակերպությունը տուժանքը ներկայացրել է ըստ առանձին չափաբաժինների և ավելացրել տուժանքում հրավերով սահմանված այն չափաբաժնի անվանումը, որի համար ներկայացրել է հայտը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ ընթացակարգի շրջանակներում բոլոր չափաբաժինների մասով պայմանագրերը կնքված են՝ գտնում ենք, որ բողոքը անհիմն է և ենթակա է մերժման»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ Կարեն Գասպարյանը և Գուրգեն Թադևոսյանը:

<u>3. ԳԲԽ-ԷՍ-2017/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի 01.08.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 04.08.2017թ. թիվ 08/15.3/14703-17 գրությունը, «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ»

ծածկագրով գնման բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով գնման բաց ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.06.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, ինչպես նաև 30.06.2017թ. թիվ 2 որոշմամբ հրապարակված՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, «Սուարդի» ԲԸ-ի կողմից նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերի պատճենները, Պատվիրատուի ներկայացուցիչների դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Կմ 36+200 Կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին՝ ի թիվս այլ մասնակիցների, հայտեր է ներկայացրել նաև «Սուարդի» ԲԸ-ն:

Հանձնաժողովը 21.06.2017թ. թիվ 3 արձանագրությամբ որոշում է ընդունել «Սուարդի» ԲԸ-ի հայտը հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող գնահատելու մասին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «Սուարդի» ԲԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Սուարդի» ԲԸ-ի կողմից ներկայացված հայտը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես, վերջինիս հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում առկա է հրավերի օրինակելի ձևի 9-րդ հավելվածով նախատեսված պարտադիր վերապայմանի խախտում, այն է՝ մասնակցի կողմից տուժանքի մասին համաձայնագրում գնման առարկայի փոխարեն նշվել է չափաբաժնի անվանումը: Բողոքաբերը գտնում է, որ օրինակելի ձևի խախտման արդյունքում ստացվում է, որ այլևս գոյություն չունի տվյալ գնման առարկայի անվանումով և ծածկագրով գնման ընթացակարգ:

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2017թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի (տվյալ դեպքում՝ հրավերի) օրինակելի ձևերի համաձայն:

Հրավերի N9 հավելված հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի օրինակելի ձևով սահմանվել է, որ 1.1 կետում լրացվում է համապատասխանաբար՝ պատվիրատուի անվանումը, գնման առարկայի անվանումը, ինչպես նաև գնման ընթացակարգի ծածկագիրը:

«Սուարդի» ԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է թվով 3 (երեք) առանձին տուժանքի մասին համաձայնագրեր, որոնց 1.1 կետում համապատասխանաբար նշվել է, որ ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու)՝

1. Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Կմ 36+200- կմ 46+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի 1-ին չափաբաժնին,

2. Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ46+000- կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի 2-րդ չափաբաժնին,

3. Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 57+000-կմ 64+174 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/2Շ ծածկագրով բաց մրցութային ընթացակարգի 3-րդ չափաբաժնին:

Բողոքի քննության նպատակով 04.08.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «Սուարդի» ԲԸ-ի տուժանքի մասին հայտարարությունը լրացված է ճիշտ, կազմակերպությունը տուժանքը ներկայացրել է ըստ առանձին չափաբաժինների և նշել է տուժանքում այն չափաբաժնի (չափաբաժինների) անվանումը, որի (որոնց) համար ներկայացրել է հայտը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Պատվիրատուի կողմից արդեն իսկ կնքվել են համապատասխան պայմանագրեր «Սուարդի» ԲԸ-ի հետ, և Խորհրդին ներկայացրեց կնքված պայմանագրերի պատճենները:

Ընթացակարգի Հրավերի Մաս I-ում նշվել է, որ գնման առարկա է հանդիսանում ՀՀ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության Մ-4

Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Կմ 36+200 Կմ 64+174, 28 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերումը: Ընդ որում, գնման առարկան բաժանված է երեք չափաբաժինների՝ հետևյալ անվանումներով.

1. Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Կմ 36+200- կմ 46+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ;

2. Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ46+000- կմ 57+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ;

3. Մ-4, Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 57+000- կմ 64+174 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Սուարդի» ԲԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերում նշված է այն գնման առարկայի (չափաբաժնի) անվանումը (անվանումները), որի (որոնց) մասով վերջինս ներկայացրել է մասնակցության հայտ (հայտեր):

Միաժամանակ, Խորհուրդը հիմնազուրկ է համարում Ընկերության այն պնդումը, որ «Սուարդի» ԲԸ-ի կողմից տուժանքի համաձայնագրի այսկերպ ներկայացվելու արդյունքում դադարում է գոյություն ունենալ տվյալ գնման առարկայի անվանումով և ծածկագրով գնման ընթացակարգ, քանի որ ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերում «Սուարդի» ԲԸ-ն կոնկրետ նշել է Ընթացակարգի՝ գնման առարկա հանդիսացող համապատասխան չափաբաժնի անվանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը «Սուարդի» ԲԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը Հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատելով ՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ա և Ա Քոնստրաքշն» ՍՊԸ-ի կողմից 01.08.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ